



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 13 ՄԱՅԻՍ, 2013

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՐՍՈՍ 14

ՄԱՐԳՈՑ ԶԱՐՈՒԹԻՒՆԸ

Անմիտ մարդիկ իրենց մտքին մէջ ըսին. «Աստուած չկայ», ուստի ապականեցան եւ զգուելի արարեցին մէջ ինկան. չկայ մէկը որ բարին գործէ:

Տէրը երկինքէն կը նայի մարդոց, տեսնելու համար թէ կա՞յ արդեօք իմաստուն մարդ մը, որ Աստուծոյ դառնայ:

Ամէնքն ալ խոտորեցան եւ մոլութեանց գիրկը ինկան.

չկայ մէկը որ բարին գործէ. չկայ մէկը, ո՛չ իսկ մէկը:

Երբեք խելի պիտի չգա՞նք բոլոր անոնք՝ որոնք չարիք կը գործեն.

անոնք՝ որոնք իմ ժողովուրդս կ'ուտեն, հացի պէս, եւ Տիրոջ չեն աղօթեր:

Բայց յանկարծակի՝ Տէրը զիրենք ահ ու դողի պիտի մատնէ, որովհետեւ Աստուած արդար մարդոց հետ է:

ՆԱՐԱԿԱՆ ԱՐԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխահիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,

Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ԱՐԹՔ

Բարիքներ շնորհող, ամենուն հանդէպ

առատաձեռն անմահ Տէր,

կ'աղաչենք, մեր հոգիներէն փարատէ՛ մշուշոտ եւ խաւարային խորհուրդները:

Բանասրկուին թելադրած պատրանքներէն հեռո՛ւ պահէ մեզ,

եւ շնորհէ՛ որ հաւատքով ապաւինինք ամենասուրբ Երրորդութեանդ՝

Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին. այժմ եւ միշտ,

յաւիտեանէ մինչեւ յաւիտեան: Ամէն:

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԺՈՐ
ԾՆՆԴՈՑ 10-11 ՎԼԽ

ՆՈՑԻ ՈՐԴԻՆԵՐՈՒՄ ՍԵՐՈՒՆԴԸ (10:1-32)

Այս գլուխը մեզի կը ներկայացնէ Սեմին, Քամին եւ Յաբէթին սերունդները: Անոնք եւ անձեր են եւ ազգերու, երկինքերու անունները: Սա ցոյց կու տայ, որ անձեր իրենք երբ քաղաքներ շինեցին, այդ քաղաքները իրենց անուններով կոչուեցան:

ԲԱՔԵԼՈՆԻ ԱՇԱՏԱՐԱԿԸ (11:1-9)

Բաբելոն կը նշանակէ խառնակութիւն:

Այս պատմութեան մէջ ունինք քանի մը հիմնական կէտեր որոնք ցոյց կու տան ամբողջ պատմութեան նպատակը:

1. Այս պատմութեան մէջ կը տեսնենք ցանկութեան, ընչաքաղցութեան եւ հպարտութեան երեւոյթը, որով կ'առաջնորդուին շինելու աշտարակը:
2. Այս պատմութեան մէջ կը կարդանք աւելին ուզելու մարմաջը, ջրաարարուելու իրենց ունեցուածքով, եւ այդ իսկ պարճառով չուելու մէկ տեղէն միւս տեղ: Այս երեւոյթը ցոյց կու տայ մարդուս ներքին պարապութիւնը, որ միշտ ալ պիտի ջրաարարուի, այնքան ապեն որ իր կեանքը չէ լեցուցած Աստուծով:
3. Չվստահելով Աստուծոյ խօսքին ու տուած խոստումին, իրենց փրկութեան ու ապահովութեան համար աշտարակ մը կ'ուզեն շինել:
4. Անոնք կը խօսէին նոյն լեզուն: Այս բացատրութեան մէջ կարելի է տեսնել, որ անոնք ունէին նոյն միտքը, նոյն գաղափարախօսութիւնը:
5. Ահա այս երեւոյթին դիմաց Աստուծը կ'ուզէ միջամտել, որպէսզի անոնք չկարենան շարունակել աշտարակաշինութիւնը: Աստուծոյ միջամտութիւնը պիտի ըլլայ խառնակել անոնց լեզուները, որպէսզի չկարողանան զիրար հասկնալ: Որովհետեւ անոնց միտքը եւ դիտումը զիրենք կ'առաջնորդէ դէպի չարիք: Լեզուներու խառնակութիւնը թշնամութիւն պիտի յարուցէ:
6. Ի վերջոյ, Բաբելոնի աշտարակաշինութիւնը կիսապ կը մնայ, որմէ ետք պատմութիւնը կը շարունակուի, այս անգամ օղակը աւելի նեղցնելով՝ խօսելու համար Աբրահամի մասին: Աբրահամ կ'ապրէր այնպիսի միջավայրի մը մէջ, ուր ամէն տեսակի անապականութիւն, չաստուածներու պաշտամունք, եւ այս կացութեան մէջ Աբրահամ հաւատարիմ պիտի մնար Աստուծոյ:

Ուրեմն, որպէս եզրակացութիւն, Աստուածաշունչ Մարտանը մեզի կը ներկայացնէ մարդիկ, որոնք, հակառակ այն իրողութեան եւ կացութեան, որուն մէջ կ'ապրէին, պիտի պահէին իրենց հաւատարմութիւնը:

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ է՞ն հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ ին արարածոց եւ ինձ բազմամեղիս:*